ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2026/150

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հունվարի 2026 թ. N 150

«ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Շիրազի 17
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2026 թվականի հունվարի 09-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՆՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 21 նոյեմբերի 2024 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 19 մարտի 2025 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 30.06.-02.07 2025թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 11 նոյեմբերի 2025 թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 13 նոյեմբերի 2025 թ.

ՆՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Ասյա Սիմոնյան**՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի սպորտի արվեստի ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ., Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում գեղարվեստական մարմնամարզության մարզիչ- մանկավարժ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Սյուզաննա Հովսեփյան**՝ Էջմիածնի Վ . Համազասպյանի անվան պետական քոլեջի դասախոս , փորձագիտական խմբի անդամ:
3. **Տաթևիկ Պետրոսյան**՝ Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Էվա Միրզոյան**՝ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Չի բավարարում
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՆՊՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Նոյեմբերյանի պետական քոլեջում վերջին ներդրվել են նոր մասնագիտություններ, բարելավվել է նյութատեխնիկական բազան, արձանագրվել է ուսանողական թվի աճ: Իրականացվող նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերը միտված են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագետների պատրաստմանը, և թողարկվող կադրերը պահանջված են տարածաշրջանում: Միաժամանակ **որակավորումների արժանահավատ շնորհման համար** անհրաժեշտ երաշխիքները լիարժեք ձևավորված չեն: Պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունը շարունակում է մնալ խնդրահարույց՝ պայմանավորված տարածաշրջանում մասնագետների սակավությամբ և դասախոսների

արտահոսքով: Մասնագիտական մոդուլների սպասարկումը երբեմն իրականացվում է սահմանափակ թվով դասախոսների կողմից: Կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման մեխանիզմները համակարգված չեն իրականացվում: Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալները չեն օգտագործվում որպես կրթական ծրագրերի արդյունավետության ցուցիչ: Հետազոտական բաղադրիչը կրթական ծրագրերում ներդրված չէ և չի ապահովում մասնագիտական վերլուծական հմտությունների զարգացում:

II. Ռազմավարական **կառավարումը լիարժեք արդյունքահեն** չէ: Ստորաբաժանումների պլաններում բացակայում են հստակ չափելի արդյունքներ և արդյունավետության ցուցիչներ, իսկ հաշվետվությունները հիմնականում նկարագրական բնույթ ունեն՝ առանց կատարողականի վերլուծության: Ռազմավարական ծրագրի և բյուջետային որոշումների միջև փոխկապակցվածությունը լիարժեք չի ապահովվում: Տվյալների հավաքագրման մեխանիզմները կայուն և պարբերական չեն: Ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացված հարցումները չեն վերածվում համակարգված վերլուծության և կառավարչական որոշումների հիմքի: Որակի ներքին ապահովման համակարգը փաստաթղթային մակարդակում առկա է, սակայն պլանավորում–իրականացում–գնահատում–բարելավում ամբողջական ցիկլը չի գործում:

III. Քոլեջին նպատակահարմար է կենտրոնանալ կառավարման և որակավորումների արժանահավատ շնորհման ինստիտուցիոնալ ամրապնդման վրա.

- մշակելով և իրականացնելով պրոֆեսորադասախոսական կազմի կայունացման և մասնագիտական զարգացման հստակ քաղաքականություն՝ անհրաժեշտության դեպքում հիբրիդ/օնլայն ձևաչափի կիրառմամբ մասնագետների ներգրավում,
- սահմանելով կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման չափելի ցուցիչներ՝ շրջանավարտների զբաղվածության, մասնագիտական համապատասխանության և աշխատաշուկայի բավարարման մակարդակի վերաբերյալ,
- ստեղծելով շրջանավարտների տվյալների բազա և տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնել զբաղվածության և մասնագիտական համապատասխանության վերլուծություն: Այդ տվյալները օգտագործել ծրագրերի վերանայման ժամանակ,
- յուրաքանչյուր կրթական ծրագրում ներառել կիրառական վերլուծական առաջադրանքներ՝ խնդիր–վերլուծություն–լուծում տրամաբանությամբ,
- որակի ներքին ապահովման գործընթացները փաստաթղթային մակարդակից տեղափոխելով դրանց գործարկման հարթություն՝ ապահովելով տվյալների պարբերական հավաքագրում, վերլուծություն և դրանց հիման վրա կառավարչական որոշումներ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնել փորձաքննություն:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՄՈՒՀ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերաբերյալ ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն

ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել, փորձագիտական խմբի կողմից նշված բոլոր խորհրդատվությունները ներառվել թերությունների վերացման ծրագրում:

3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈՒԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈՒԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՆՊՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ Վ. Գաբրիելյան

2026 թ., հունվարի 09